

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакеъ“.
կամ Tiflis, Rédaction „MSCHAK“.
Տէլեֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ:
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՎԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ԻՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

«Մշակ» վեց ամսվա գինն է, յուլիսի 1-ից մինչև տարվա վերջը 4 ռուբլի: մէկ ամսվա
նը—մէկ ռուբլի: Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն կէս տարվա համար 3 դոլլար,
Եւրոպայի բաժանորդները—16 ֆրանկ:

Կարողութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ»-ն գրվելու համար, և առհասարակ նամակներ և
ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция „МШАКЪ“;
իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien „MSCHAK“:

Ցայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Ի Կ Բ Ա Յ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Զ Է Ը Ն Գ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆՒԱԿՈՒԹԻՒՆ

Հեշտ է իրագործել. Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Բօրչալուի գաւառից. Նամակ Իգլիկից. Նա-
մակ Թիֆլիսից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին
լուրեր. — ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻ-
ԲԱՎԱՆ. Ինչ է առաջադիմութիւնը:

ՀԵՏԵ Է ԻՐԱԳՈՐԾԵԼ

Անհրաժեշտ ենք համարում դարձնել
մեր ընթերցողներին ուշադրութիւնը այն
համակարգի տրամադրութեան վրա, որ
ներկայումս գոյութիւն ունի ուսումնական
վարչութեան մէջ արդիւնազոր ծա-
կան կրթութեան վերաբերութեամբ և
հրապարակման գործողներին՝ օգտվել այդ
տրամադրութիւնից կրթարաններ բա-
նալու մեր գաւառի զանազան մա-
սերում: Ինչպէս յայտնի է, Կովկասի շատ
դպրոցներն կից բացվել են արհեստա-
նոցներ և գիւղատնտեսական գաստա-
կերտներ, որտեղ աշակերտները դարձի-
տութեան դասերից յետոյ պարապում են
և ձեռք բերում գործնական գիտութիւն-
ներ: Երկրագործութեան միջնորդութիւնը

շատ մեծ համակրութեամբ է վերաբեր-
վում դէպի այդպիսի պարապմունքներ և
իր կողմից աջակցում է նրանց իրագոր-
ծութեանը՝ թէ պետական հորերից ազատ
տեղեր յատկացնելով այդ դպրոցներին և
թէ տարով յայտնի քանակութեամբ դրա-
մական նպաստ: Այս օրերս նա որոշեց
օգնել դարձեալ երեսուներկու դպրոցի,
որոնք կը մտնեն գիւղատնտեսական դա-
սերից իրան ծրագրի մէջ: Այդ թը-
ւից ութը ուսուցչական սեմինարներ
են ապագայ ուսուցիչներ պատրաստու-
լի համար, գիւղատնտեսական պատրաստու-
լի համար:

Մեր ընթերցողները գիտեն, որ այդ
տեսակ դպրոցներ կան մեզ մօտ Ախալքա-
լաքում կաթնամանսական ծիւղով, Ա-
խալքալաքում՝ այգեգործական ուսումով,
Սաղսինխում, Կվիլիում և ուրիշ շատ
տեղերում գիւղատնտեսական ուսման զա-
նազան ծիւղերով: Ուսումնական վարչու-
թիւնը ամենայն պատրաստակամութեամբ
կը բանայ այդ տեսակ դպրոցներ, եթէ
տեղական ազգաբնակիչներ իր վրա
վերցնի անհրաժեշտ ծախսերը:

Մենք մի անգամ ևս հրաւիրել էինք
մեր գաւառական գործողներին ուշադրու-
թիւնը այս առարկայի վրա և հարկաւոր
ենք համարում նորից մատնացոյց լինել

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՉ Է ԱՌԱՋԱԳԻՄՈՒԹԻՒՆԸ (Ըստ Ն. Միխայլովսկու)

Մտադիր լինելով մի շարք յօդուածներով ծա-
նօթանալ ընթերցողներին եւրոպական մտա-
ծողների ինքնուրոյն հայեացքներին, մենք
սկսում ենք այդ շարքը յայտնի ուս հրապա-
րակախօս, քննադատ և հասարակագէտ Նիկոլայ
Միխայլովսկուի գրքից՝ միակ ուս հասարակա-
գէտն է, որ քարոզել է ինքնատուրի հասարակա-
կան աշխարհայեացքը, և երկրորդ՝ մեր ներ-
կայ երիտասարդութեան նշանաւոր մարդ գտնվել
է երկար ժամանակ և մասամբ գտնվում է այժմ
այդ տաղանդաւոր մտածողի ազդեցութեան տակ:
Լինելով եւրոպական լուսավորչների ուս
առաջադէմ երիտասարդութեան շարքերի իշ-
խանը և իդէալների արտայայտիչը, Միխայ-
լովսկու մնաց այդ իդէալների դրօշակակիր և ութ-
սունական թուականներին, երբ գլուխ բարձ-
րացրին «մարդ գործերը» կուսակից չափաու-
րականները: Վերջին տարիներս ուս առաջա-
դէմ երիտասարդութիւնը սկսեց յափշտակվել
տնտեսական մատերիալիզմ կոչված ուղղութեամբ
և Միխայլովսկին, որ կատարի պայքար սկսեց
այդ ուղղութեան դէմ, փորը ինչ կորցրեց իր
ազդեցութիւնը երիտասարդութեան շրջանում:
Բայց այնու ամենայնով մինչև այժմ էլ նա
մնում է ամենախոշոր կերպարանքը ուս հա-

սարակազմութեան կրթական և հրապարա-
կախօսութեան մէջ:

Այն յօդուածների շարքը, որ քաղաւածօրէն
առաջարկում ենք այստեղ հայ ընթերցողներին,
գրված է շատ վաղուց, բայց տաս տարի առաջ
ինքը Միխայլովսկուի գրում էր, թէ այդ յօ-
դուածներում արտաբայովա՞ծ աշխարհայեաց-
քը շարունակում է լինել իր դաւանանքը ոչ
միայն ընդհանուր առմամբ, այլ և մանրամաս-
ներում: Այդ յօդուածները գրված են իբրև քնն-
նադատութիւն յայտնի փիլիսոփայ Սպենսերի
հայեացքներին, որով կրկնակի հետաքրքրութիւն
են ներկայացնում ընթերցողներին համար:

I

Ինչ է առաջադիմութիւնը:
Գնելով այդ հարցը, Սպենսերը նկատում է,
թէ առաջադիմութիւնը խօսքը վերին աստի-
ճանի անորոշ է, որովհետև այդ անունը մենք
տալիս ենք շատ տարբեր բաների: Իսկ ամե-
նազաւակուր անյարմարութիւնը այդ խօսքի կա-
յանում է, նրա կարծիքով, նրանում, որ նրա
հետ կապված է նպատակադրական գաղափար:
«Բարձր երկայնութեան զննվում են մարդկային
բախտաւորութեան տեսակէտից. միայն այն փո-
փոխութիւններն են համարվում առաջադիմու-
թիւն, որոնք ուղղակի կամ անուղղակի ձգտում
են ապահովել մարդու բախտաւորութիւնը, և
առաջադիմութիւն են համարվում միմյանից այն
պատճառով, որ նպատակում են այդ բախ-
տաւորութեանը: Առաջադիմութիւն բառի նը-
պատակութեանը համարում ենք նաեւ այն, որ
պատակադրական իմաստը նեղացնում է նրա
նշանակութիւնը, ուստի «մեր նպատակն է,
ասում է Սպենսերը, քննել փոփոխութիւններ
զանազան դասեր, որոնք սովորաբար առաջադի-

այդ օգտաւէտ և նպատակաւորմար գոր-
ծի վրա, որպէս զի մեր տեղական գոր-
ծողները օգտվին եղած բարի տրամա-
դրութիւնից և անմիջապէս իրագործէին
այն, ինչ ուրիշ ժամանակներ կարող է
զանազան խոչընդոտներ և սառն ընդու-
նելութեան հանգրիպել:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲՈՐՇԱԼՈՒԻ ԳԱՒԱՌԻՑ

Յունիսի 30-ին

Ամեն մի գաւառի բացվելու, Բօրչալուի բնա-
կիչը սիրուն օրեր, առատ բերք, լաւ հունձ
սպասելու հետ՝ սպասում է կարծես թէ մի ու-
րիշ բանի էլ և լուծում է նրան, իբր թէ այդ
սպասելիքը երևան չը գալը ժամանակի սովոր-
ական ընթացքը խանգարել է նշանակում: Նրա
սպասելիքը առաջակ խմբերի երևալը, նրանց
յանգուրդն կողոպտումներն են, որ մեր գաւա-
ռում զարնան և ամառվայ անբաժան ընկեր-
ներն են եղել մինչև այժմ, մի պատճառ, որ
խաղաղ գիւղացուն մեծ-մեծ վտանգների տակ է
գցում և արգելում նրան կուլտուրայական աւելի
զարգանալու: Եթէ հարուստ կամ միջակ հա-
րուստ գիւղացին միջոցներ չէ ձեռք առնում
լաւ տեսակի ձիեր կամ կովեր, կամ թէ չէ լըմ-
կան ապրանք ունենալու, պատճառներից մէկն
էլ այն հանգամանքն է, որ Մովսէսի պատգամը
— հարևանիդ ունեցածի վրա վատ աչք մի ու-
նեցիր — հասկացվում է այստեղ հակառակ մտքով:

Բնութեան այնպիսի մի եղանակով, երբ եր-
կրբը գիւղացու մէջքն է բարձրում մի շարք ան-
հրաժեշտ աշխատանքներ, երբ նա մեղուի պէս
աշխատում է, հանգստանալու ժամանակ չունի,
շատ պարզ է, որ առաջակների ստպատակու-
թիւնները, անասունների գաղանալ տալու վա-
խը գիւղացուն իր այդ բոլոր ֆիզիքական նե-
ղութիւնների հետ հոգեկան տանջանք էլ են
տալիս: Գաւառիս հայ, ուս և մասամբ գերմա-
նացի գիւղացիները դժբաղդութիւն ունեն դրա-
ցի լինելու մի ցեղի, որի համար առաջակու-
թիւնը իրիթութիւն է համարվում, ձի, տաւար
դողանալը — առևտուր:

Ներկայումս, փառք երկրքին, յունիսն էլ ան-
ցաւ և առաջակային խմբեր չը կան: Յայտնի

Մուրակուլովի խմբի մասին լուր անգամ չը
կայ, որը անցեալ տարի այնքան երկար թա-
փառեց գաւառում և այնքան զլխացաւանք
պատճառեց:

Մանր գոգութիւնները, կամ երեւնալի պա-
տահած մարդասպանութիւնները մենք հաշի
չենք առնում. դա թուրքերի մէջ եղել է, կայ և
կը շարունակվի, մինչև որ ինքը, թուրք ժողո-
վուրդը, կուլտուրայէս զարգանալով՝ գաւառի
մնացած ազգութիւնների շարքը չը մտնէ, կամ
թէ իր համոզմունքների շարքից դէն չը գցէ իր
ունեցած և արիւն ու մարմին դարձած կոյր
վրէժվորութիւնը, որ բոլոր թշուառութիւնե-
րի մայրն է ներկայացնում:

Սկսված փորձը կանոնաւոր տարբական կրթ-
թութեան տարածումը թուրքերի մէջ, գուցէ ա-
պագայում ունենայ իր ազդեցութիւնը նրանց
վարք ու բարքի վրա, իսկ առ այժմ, բացի
ազմինիստրացիայի հակոտութիւնից, նրանց բա-
րեփոխող միջոցները ծրագրվում են միայն Այս
տարի գոյութիւն ունէին մի երկու-եքեր կենտ-
րօնական գիւղական դպրոցներ գաւառիս թուր-
քաբնակ մի մասում. այժմ, որպէս լսում ենք,
ուսումնարանական վարչութիւնը մտադիր է
դպրոցներ թիւը շատացնել, բայց անելով ամեն
մի գիւղում, կամ ի նկատի առնելով դրանց
իրարից շատ մօտիկ լինելը և քիչ ազգաբնակու-
թիւնը — դարձեալ ուրիշ կենտրոնական ուսում-
նարաններ:

Ա. Ի.

ՆԱՄԱԿ ԻԳՐԻՐԻՑ

Յունիսի 28-ին

Իգլիկում և ընդհանրապէս Մուրակուլուի գա-
ւառում թանգութիւն է. ցորենի խալվարի «մա-
զանդան» մի ժամանակ զարձրացաւ մինչև 35—
40 ռուբլի. հացի ֆունտը ծախվում էր 3 կո-
պեկով. այդ գինը մեր ժողովրդի համար շատ
մեծ էր և անձեռնտու, որովհետև ժողովուրդը
աղքատ է: Ամենին երկիւղը պատել էր, ամե-
նից յուսահատական աղաղակներ ու զանգառ-
ներ էին լսվում և քաղաւ քաղաւ սպասում
էին սաստիկ թանգութեան: Վայն և կան ըն-
տանիքներ, որ մի կտոր չոր հացի կարօտ են
և ամիսներով չաքաններով մսի համ չեն տես-
նում. բայց երեւի այդ աղիտիւրդ և սրտանձիկ
աղաղակները և ճիւղեր արձագանք չէին զու-

տւածքի, թէ իր քիմիական բաղադրութեան
կողմից: Բայց ժամանակի ընթացքում նրա մէջ
որոշակի դառնում են սկզբում երկու մասեր,
որոնցից իւրաքանչիւրը յետոյ նոյնպէս տար-
բերանում է, և այն: Այդ գործողութիւնը շա-
րունակվում է այնքան, մինչև որ գործարանա-
ւոր մարմինը հանում է վերջապէս իր դար-
դացման, այսինքն բարդացման, գաղաթնաթի-
ւին: Այդ լայն և կատարելապէս գիտական
ընդհանրացումը Սպենսերը հիմք է չինում աւե-
լի ևս լայն ընդհանրացման: Չործարանական
զարգացման օրէնքը — ասում է նա — ամեն տե-
սակ զարգացման օրէնքն է: Ինչին էլ վերա-
բերի հարցը՝ երկրի զարգացման, թէ նրա մա-
կերտյթի վրա կատարվող կենքի զարգացման,
կամ թէ հասարակութեան, պետական վարչու-
թեան, արհեստագործութեան, աւետրի, լեզուի,
գրականութեան, դիտութեան, գեղարուեստի
զարգացման, — ամեն տեղ կատարվում է մի և
նոյն փոփոխութիւնը պարզից դէպի բարձր՝
յաջորդական տարբերացումների միջոցով: Սկսած
առաջին փորը ի շատէ նկատելի տիեզերական
փոփոխութիւններից մինչև քաղաքակրթութեան
ամենավերջին հետեւանքները մենք տեսնում ենք,
որ միատեսակի զանազանատեսակ դառնալն է
այն երկոյթը, որի մէջ կայանում է առաջադի-
մութեան էությունը:

Թէ դիւր գրված է, և Սպենսեր սկսում է, իր
սովորութեան համաձայն, բերել բաղաթնաթիւ օ-
րինակներ:

Այժմ գոյութիւն ունեցող վայրերի ցեղերը և
պատմութեան մի բանի կցկուտը՝ վկայութիւն-
ներ բաւական պարզ գաղափար են տալիս մեզ
նախնական կուլտուրայի մասին: Նախնական

նում մեծ քանակութեամբ ցորեն, ունեցողները սրտեղծում, որոնք հանգիստ, առանց խոճի ճնշում գտնվում, սպասում էին ցորենի աւելի թանկացանքուն:

Գարնան վերջին էր: Իգդիր գիւղի չուկայի ընդարձակ հրապարակում տիրում էր մեծ աղաղակ, խոսակցութիւն: Թէ մարդ, թէ կին, թէ երիտասարդ չըրապատել էին մի քանի «թալ» (սուպակ) ցորենի, գլուխ էին կոտրում, աշխատում էին գոնէ մի քանի լիւր ցորեն առնել: Ի հարկէ, յաղթութիւնը մնում է գիւղում դիրք ունեցողներին և ուժեղների կողմը, թոյլերը դատարկ ձեռքով են հեռանում:

Ճանցաւ երկար ժամանակ, Կարսից, Կաղզը-լանից, Ալիդամարուից մեծ քանակութեամբ ցորեն լցվեց Իգդիր. բացի այդ, իգդիրցի ցորեն ունեցողներ շոյնպէս դուրս հանեցին ամբարներից ցորենը և բաժանեցին ժողովրդին, ի հարկէ երկար խնդրելուց և սպառնալիք կարգալուց յետոյ: Այդպիսով մի փոքր բարւոքվեց ժողովրդի անհաւանձնելի դրութիւնը և մեծ հարուած տուցեց մոտայնուտ սովին: Ցորենի մազանդան իջաւ մինչև 28—30 րոպէի, իսկ հացի գինը մնաց մի և նոյնը: Այդպէս չարունակվեց, մինչև վրա հասաւ ունեւը, որին յուսահատված, ըստ կրօնարած, հալ ու մաշ եղած ժողովուրդը անհամբեր, րօպէ առ րօպէ սպասում էր դիմաւորելու և որը ազատեց խեղճ ժողովրդին անխնայ թանկութեան ճանկից:

Մեղանում հունձը աջող է. հունձը և կալ կալսելը արդէն զուգընթացաբար սկսվել են: Հացահատիկների վերաբերմամբ շոյնպէս գոհացուցիչ լուրեր են լսվում մօտիկ գիւղերից. առհասարակ Սուրմալուի գաւառի գիւղերը հացահատիկների լաւ բերք են խոստանում: Իսկ «դեմի» ցորենները շատ յուսահատական են: Մեղանում տօթ շոր է, շատ ուշուշ են անձրևները գալիս, անձրևները ընդհանրապէս նուազ են, ինչպէս և սարերում: Գործերից յաճախ լսվում են վատ լուրեր. վայ է, որ կանչում են, Աստուած է, որ աղաղակում են և գթութիւն աղբիւրում: «Դեմի» ցորենը համարեալ թէ չորացել է, խոտ անգամ չը կայ կենդանիների համար, որին ապացուց կարող է ծառայել այն, որ քրդերը սուրուններով ոչխարները սարից ցած են բերում ու ծախում, որ նրանց ապրուստի միակ ապահով միջոցն է կաղնուս:

Մեղանում ձորերի պտուղները ընդհանրապէս առատ էին, բայց վերջին կարկուտը, որ մեզ համար հազուադէպ օրինակներից էր, մեծամեծ մնասնեք հացրեց պղտատու այգիներին, շոյնպէս—խաղողին, բաժակին, իսկ ցորենին այնքան մնաս չը տուց:

Ե. Ֆրանգեանց

ՆԵՐՓԻՆ ԼՈՒՐԵՐ

«ԿԱՅԱՅ» լրագրին Արաւթումանից հեռագրում են յուլիսի 5-ից. «Այսօր Պետերբուրգից եկան՝ գեներալ-ադիրաւտները կոմս Օլուֆիել և իշխան Գոլցորուկի, Նորին Մեծութեան սվիտայի գեներալ-մայոր Բիբիկով, Նիկոլաեւ, արարու-

հասարակութեան մէջ գրեթէ չը կայ աշխատանքի բաժանում: Նա թերեւս աւելի հեռու չէ գնում քան այդ մարդու և կնոջ աշխատանքի մասնաւորում: Բայց դրանից դուրս՝ հասարակութեան իւրաքանչիւր անդամ միաժամանակ և որսորդ է, և ձկնորս, և զինագործ, և զինատանքի՝ նախնական մարդուն մատչելի բոլոր ճիւղերում: Իւրաքանչիւր ընտանիք ինքն է բաւարարութիւն տալիս իր ոյժերով իր բոլոր պահանջներին: Ուստի ի նկատի ունենալով նախնական մարդկանց խմբակի գրաւած տեղի ֆիւլքական պայմանները միատեսակութիւնը, պէտք է ընդունենք, որ այդ խմբակը իր ամբողջութեամբ ներկայացնում է գրեթէ կատարեալ միատեսակութիւն: Նրա անդամների մէջ չը կայ մեծ տարբերութիւն պարապմունքների, մտաւոր զարգացման աստիճանի, մարմնական ոյժի, կազմուածքի կողմից: Բայց ժամանակի ընթացքում հասարակութիւնը տարբերանում է, բաժանվում է երկու մասի՝ կառավարիչների և կառավարվողների: Սկզբում այդ տարբերութիւնը շատ խիտ բնաւորութիւն չէ ունենում: Պետերբուրգից, ինչպէս և զեկավարվողները, իրանք են ցախ ջարդում ու որսի դնում, իրանք են չինում իրանց խղճուկ բնակարանը և իրանց նետ ու աղեղները: Սակայն զանազանատեսակութեան սերմը արդէն արմատ է գցել նախնական հասարակութեան կուռական հողում և շուտով պետք է իշխանութիւնը դառնում է ժառանգական: Պետերբուրգ միշտ իւրացնում են կառավարողների դերը և այլ ևս իրանք չեն աշխատում, գործածելով դրա

դապետ Կոնիար, իշխան Ուրուսով, կոմս Մուսին-Պուշկին և իշխան Մաղարի սենեկապետները, ֆիլիզէ-ադիրաւտները կոմս Երեմեյեւ և իշխան Գոլցորուկի, գեներալ Անիչկով, կամէր-ինկերները կոմս Տոլստոյ և Խիտրով, աւագ քահանայ Սարախովիչ պալատական հոգեւորականութեան հետ: Քիֆլիսից եկած պատգամաւորութիւնը Թագաժառանգ Ցեսարեւիչի դազդի վրա արծաթեայ պսակ դրեց և խաչի մօտ հոգեհանգիստ կատարեց: Արծաթէ պսակներ են դրված շոյնպէս Ախալցխայից, տէնգինեան գնդից և պօստ-հեռագրատանից: Ցէսարեւիչի նշաբարը պալատից եկեղեցի կը փոխադրվի վաղը առաւօտեան: Բօրժով գնալը նշանակված է յուլիսի 7-ին, առաւօտեան 4 ժամին: «Теорія Подѣло» գրահակիր նաւը Բաթում կը գալ յուլիսի 8-ին առաւօտեան: Այսօր եկան Ամիլախվարի և Ամիրալիի գեներալները: Ճանապարհ ընկան Բօրժով Մուրախիկ և Ճավալաձէ իշխանները: Քիֆլիսի համբարներին թոյլ է տրված Բօրժովում լինել յուլիսի 7-ին:

Ինչպէս յայտնի է, մեր լրագրի Ախալքալաքի թղթակից Ջ. Տ. Գ., «Մշակ» անցաւ 1898 թվ. 197 և 203 համարներում խոսելով Ախալքալաքի գաւառի վաշխառութեան մասին, մատնացոյց էր եղել Ղզըր-բիլիս գիւղի բնակիչ Սանդաձէի գործունէութեան վրա: Սանդաձէ (Ալէքսի) վերաւորված գաղով իրան այդ թղթակցութիւնները, հաւատարմատարի միջոցով, դատ է բացել «Մշակ» լրագրի խմբագրի խմբագրի դէմ, մեղադրելով նրան օրէնքի 1039 յօդուածով դիֆֆամացիայի մէջ: Գաղտնաբերական ըննիչի զեկուցումից երևում է, որ Սանդաձէի հաւատարմատարը դատ չէ սկսում թղթակցի դէմ այն պատճառով, որ թղթակցութիւնը առ օրէնք, այլ «Մշակ» խմբագրի դէմ, որովհետեւ նա, «Մշակ» խմբագրի, չէ յայտնում թղթակցի աշխատանքի մասին: Գաղտնաբերական ըննիչը յուլիսի 30-ին կանչել էր «Մշակ» խմբագրին և Սանդաձէին (եկել էին Ալէքսիի երկու որդիները)՝ աշխատութեամբ գործը վերջացնելու: Հաշտութիւն չը կայացաւ:

Մեզ հաղորդում են, որ Էջմիածնի Սինդը որոշում է կայացրել՝ յայտնելու Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան, որ դպրոցի հակուղութեան տակ եղած բոլոր ուսանողները առանց պատճառաբանութեան և յետաձգութեան պէտք է յանձնվեն հոգևոր իշխանութեան: Դպրոցի հոգաբարձութիւնը իր առաջիկայ նիստում պէտք է լսէ Սինդի այդ առաջադրութիւնը և կայացնէ որոշում:

Մեզ հաղորդում են, որ Էջմիածնի Գեորգեան ճեմարանի տեսուչ Կ. Կոստանեան թողեց իր պաշտօնը տկարութեան պատճառով և մտադիր է առաջիկայ ձեռքը անցկացնել Ալէքսանդրօպօլում: Կոստանեանի տեղ նշանակված է Կարապետ վարդապետ Տէր-Սիւրբանյան:

Պաշտօնապէս յայտարարված է, որ ժամանա-

մանք՝ պատերազմի կամ մի ուրիշ միջոցով ձեռք բերած գերիներին, իսկ այդպիսով վատարակած աղատ ժամանակից օգտուում են մտաւոր զարգացման համար: Ժամանակին առաջ է դալիս և հոգևոր իշխանութիւնը: Մեր միատեսակ հասարակութիւնը բաժանվեց կառավարիչների և կառավարվողների, իսկ կառավարիչները—աշխարհական և հոգևոր կառավարիչներ: Հասարակութիւնը աւելի այլապես դարձաւ: Տարբերացումը կանգ չէ առնում այդ աստիճանի վրա, և վերջ ի վերջոյ երևան է գալիս վարչութեան վերին աստիճանի բարդ կազմակերպութիւն: Մենք հասնում ենք այժմեան սահմանադրական տիպին, որի մէջ սահմանադրվում են օրէնսդրական, վարչական ու դատաստանական իշխանութիւնները իրանց զանազան ճիւղաւորութիւններով—միապետ, միւնիստրներ, վերին և ներքին ժողովներ, դատարաններ, գանձարաններ, ոստիկանութիւն և այլն: Հոգևոր իշխանութիւնը, որ սկզբում գտնվում էր միմեանց հաւասար անձերի ձեռքում, բաժանվում է և առաջ են գալիս պատրիարքներ, մետրօպոլիտներ, արքեպիսկոպոսներ, եպիսկոպոսներ և այլն: Բարձրը և սովորութիւնները, հասարակական դիրքերի տարբերութեան ազդեցութեան տակ, շոյնպէս կորցնում են իրանց միատեսակութիւնը: Գիտութիւնը, կրօնից ու փիլիսոփայութիւնից դատվելուց յետոյ, ինքը ստորաբաժանվում է բազմաթիւ ճիւղերի: Մի և նոյն ժամանակ տեղի է ունենում արագ ջնկվողում և կառավարվողների մէջ: Աշխատանքի տնտեսական բաժանման ազդեցութեան տակ, նրանք հետզհետէ բաժանվում են զանազան դասակարգերի,

տախտը Բօմբէյում թուլանում է. յուլիսի 10-ից մինչև 16-ը հիւանդացի են նորից 53 անձ և մեռել 54, իսկ Բելգում մէջ ուժեղանում է. նորն թուերին հիւանդացի են 155 անձ և մեռել 106. Արաբիայի Ջեդդա քաղաքում մայիսի 15-ից սկսած հիւանդացիներ չեն եղել: Ալէքսանդրիա մայիսի 1-ը նոր տոմարով յունիսի 20-ից մինչև 26-ը հիւանդացի են նորից 10 անձ և մեռել 6, իսկ յունիսի 27-ից մինչև յուլիսի 3-ը հիւանդացի են 13 և մեռել 4 անձ: Պարսկաստանի Բուշիք քաղաքում յուլիսի 3-ին նոր տոմարով տեղի է ունեցել հիւանդութեան միայն մէկ դէպք. Չինաստանի Զօնգ քաղաքում յունիսի 25-ից մինչև յուլիսի 1-ը նորից հիւանդացի են 142, իսկ մեռել 144 անձ:

Բարձրագոյն հրովարակով հրամայված է ցամաքային և ծովային զօրքը լրացնելու համար, ներկայ 1899 թվին զինուորագրութեան կանչել 291,000 անձ: Տերեկի նահանգի օս աղաքանակութիւնից պէտք է կանչվեն 100 անձինք:

Կովկասում մի քանի տասնեակ տարիներ գործող «Кавказъ и Меркантиль» ընկերութիւնը, ներկայում իր կանոնադրութեան մէջ փոփոխութեան կարօտ կէտեր, մշակել էր կանոնադրութեան նոր ծրագիր և ներկայացրել բարձր իշխանութեան: Նոր կանոնադրութիւնը, որ ներկայ տարրից ապրիլի 22-ին ստացել էր պետական տորթի նահանգութիւնը, այժմ վերջնականապէս հաստատվել է:

«Пер. Вѣд.» լրագրին ասում է, որ Տրանսիան, ուրիշ պետութիւնների հետ միասին, շատ հետաքրքրվում է Ռուսաստանի արդիւնաբերական կենսութիւնը, ուր նա յաճախ ուղարկում է իր գործակալներին՝ առևտրի և արդիւնաբերութեան զանազան ճիւղերին ուսումնասիրելու համար: Ներկայումս Բագու է ուղարկված պ. Վերատուր, որը ֆրանսիական առևտրական գործակալ է Ռուսաստանում, Կովկասի նահանգին և հանրային գործի դրութիւնը բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար: Գրանից անկախ, ֆրանսիական կառավարութեան տեղական գործակալներն ևս Ռուսաստանում պարտաւորված են իրակապար հաշիւներ և զեկուցումներ ներկայացնել Ռուսաստանի առևտրի և արդիւնաբերութեան դրութեան մասին: Այդ տեսակ հաշիւներից մէկը, որ կապվել է հիւպատոս Bosseront d'Anglade, նորեքս հրատարակեց ֆրանսիական կառավարութիւնը և վերաբերում է երկրագործութեան, արդիւնաբերութեան և առևտրի դրութեանը Կովկասում 1897 թվին: Հաշիւը շատ լրակատար է կազմված, և հեղինակը, ըստ երևոյթի, օգտվել է պաշտօնական աղբիւրներից:

«Кавказъ» լրագրի մէջ կարդում ենք. «Քիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների դիրեկտորի պաշտօնակատարը հաղորդեց Քիֆլիսի պահանջագրերին, որ անցաւ տարի, երբ ուսում-

որոնք զբաղվում են միայն մի որ և է մասնաւոր գործով, այնպէս որ վերջապէս հասնում ենք այնտեղ, որ բնաւոր չինում է միմիայն գնդապետի գլուխ կամ մէկը ժամացոյցի մեքենակազմի անիւներից: Յետոյ Սպէնսը անցնում է լեզուի, գրականութեան, գեղարուեստի դարգացման: Օրինակ բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը և պարը կազմում էին մի ժամանակ մի ամբողջութիւն: Իսրայէլացիք պարում և երգում էին ոսկէ հորթ չինելիս, պարում և ծննդալ էին դարձնում, երբ երգում էին Մովսէսի շարադրած օրհներգը եգիպտացիների վրա տարած յաղթութեան առիթով: Յունաստանում, Հռօմում և նոյն իսկ աւելի մօտ ժամանակներում բրիտանիայ երկրներում երգեցիկ խումբը պարում էր երաժշտութեամբ: Բայց երգում տեսնում ենք, որ արուեստի այդ ճիւղերը բոլորովին ջնկվողվել են իրարից: Մենք ունենք լուռ ու մունջ բալետ, որի մէջ երաժշտութիւնը չունի գրեթէ ոչինչ նշանակութիւն. ունենք օպերա, որի մէջ մենք ականջ ենք դրնում միայն նուագաւորութեան ու երգեցողութեան կամ միմիայն երգեցողութեանը և ուր բանաստեղծութիւնը, բուն նշանակութեամբ, աւելի քան կանխածելի դեր է խաղում: Այդ դերն այնպիսի բնաշխարհներ են, ուր կապը երբեք նախնական տարրերի մէջ ամենից շատ է պահպանվել: Սակայն այդ իրարից դատված երբեք արուեստներից իւրաքանչիւրն էլ ջնկվողվել է յաջորդաբար: Հին վիպասանութիւնը բաժանվել է երկուսի՝ էպիկականի և քնարերգականի: Նախնական դարկային երաժշտական գործերները, ինչպէս դափը, փոխադրվել են բազմա-

նարանական վարչութիւնը ընդունում էր հայալուսաւորական սուրբ Կարապետ եկեղեցուն կից գտնվող ծխական-եկեղեցական դպրոցի գոթը, համաձայն այնտեղ կազմված արձանագրութեան, ուսումնարանական վարչութեան իրաւասութեան տակ ընդունվեց այն ամբողջ տունը, որի մէջ առաջ գետնված էր դպրոցը, որովհետեւ հոգևորականութեան ներկայացուցիչները չը կարողացան փաստօրէն ապացուցանել, որ այդ տունը պատկանում է եկեղեցուն, և ցոյց տալ, թէ ինչ նպատակով էր կառուցված այդ տունը: Ներկայումս, թէ եկեղեցու գործակալ Տէր-Գաբրիէլանց քահանայ, և թէ նրա երէցփոխ Գէորգ Մանուկեանց, իրանց իրաւունքից դուրս համարելով ուսումնարանական վարչութեանը յանձնելով վերոյիշեալ տունը, մինչև այժմ չեն դատարկում մի քանի բնակարաններ այդ տան մէջ և դպրոցները դիրեկտայի կողմից լիազօրութիւն ունեցող անձի բոլոր պահանջներին մերժումով են պատահում, և հրաժարվում են կատարել դիրեկտայի օրինական պահանջները, առանց հիմնական պատճառներ առաջ բերելու: Ի նկատի ունենալով վերոյիշեալը, և այդ առարկայի մասին ապագայում անպէտք դրագրութիւն դադարեցնելու համար՝ դիրեկտորի պաշտօնակատարը խնդրում է պ. նահանգապետից՝ համապատասխան կարգադրութիւն անել և պարտաւորեցնել ս. Կարապետի եկեղեցու հոգևորականութիւնը՝ ճշգրտութեամբ կատարելու դպրոցները դիրեկտայի բոլոր պահանջները:

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց տիկին Մարիամ Խատիսեանցի «Բժշակ» կիսա վէպը, որ լոյս է ընծայել Քիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութիւնը: Վէպը կազմում է մի գրքիկ, բաղկացած փոքրադրեր 139 երեսից, գինն է 45 կօպէկ:

Յունիսի 30-ին լրացաւ ուսու յայտնի վիրաբոյժ, պրօֆէսոր Ն. Վ. Սկլիֆասօփուկոս գիտնական և հասարակական գործունէութեան 40-ամեակը: Յօբելաւոր ծնվել է 1836 թվին Խէրսօնի նահանգում. միջնակարգ կրթութիւն ստացաւ Օդէսայի գիմնազիայում, ուր իր ուսումը ավարտեց յետոյ մտաւ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Աւարտելով 1859 թվին իր ուսման ընթացքը համալսարանում, Սկլիֆասօփուկոս սկսեց իր բժշկական գործունէութիւնը Օդէսայի քաղաքային հիւանդանոցում, իսկ 1865 թվին գնաց արտասահման և ամբողջապէս նուիրեց իրան պաթօլօգիական ախտաբանության և վիրաբուժութեան ուսումնասիրութեանը: Արտասահմանից վերադառնալով յետոյ նա հրաւիրվեց ս. Վլադիմիրի համալսարանը վիրաբուժութեան ամբիւն դրաւելու համար, իսկ այնտեղից 1871 թվին փոխադրվեց բժշկական-խրոնիկական ակադէմիան նոյն ամբիւն դրաւելու, ուր նրա կատարած օպերացիաները մեր ամենալաւ վիրաբոյժներից մէկն համարւում տոհմ նրան: 1876 թվին Սկլիֆասօփ սկի ուղարկվեց Ձերնօգօրիտ, իսկ 1877 թվին եռանդով մասնակցելով վիրաբուժական երկու օգ

թիւ լրարային և փչովի գործիքներով: Նախնական կլոր պարը զարգանալով ջնկվողաւով է անթիւ կենսապարերի ու խմբապարերի: Այդպիսով ներածօրէն (ինդուկտիվ կերպով) ստանալով զարգացման բանաձեւը (բեր է մայրի ի կալ կան (փորձական) օրէնք, Սպէսէր աշխատում է այնուհետ հաստատել փարտածօրէն (դեդուկտիվ կերպով) իր բանական, գիտական օրէնք, գտնելով զարգացման երկոյթների մէջ նկատվող միակերպութիւններ և կրկնութիւնների պատճառները: Այդ պատճառները, Սպէսէրի կարծիքով, երկուս են,—առաջինը այն, որ «Իւրաքանչիւր գործող ոյժ առաջ է բերում աւելի քան մի փոփոխութիւն, իւրաքանչիւր պատճառ առաջ է բերում աւելի քան մի գործողութիւն կամ աւելի վերացօրէն՝ ամեն մի փոփոխութիւն ուղեկցվում է աւելի քան մի փոփոխութեամբ և երկրորդը, որ «միատեսակութեան պայմաններ անկայուն հասարակաւորութեան պայմաններ են»:

Միայնովսկին աշխատում է մասամբ հերքել մասամբ էլ սահմանափակել Սպէսէրի այդ արտածական պատճառաբանութեան նշանակութիւնը, բայց մենք բաց ենք թողնում յօդուածի այդ մասը, որովհետեւ նա կարեւորութիւն չունի մեզ հետաքրքրող բուն խնդրի համար և բացայայտվել: Սակայն այդ իրարից դատված երբեք արուեստներից իւրաքանչիւրն էլ ջնկվողվել է յաջորդաբար: Հին վիպասանութիւնը բաժանվել է երկուսի՝ էպիկականի և քնարերգականի: Նախնական դարկային երաժշտական գործերները, ինչպէս դափը, փոխադրվել են բազմա-

(Կը չարունակվի)

Ներքին գործեր, մասնաճյուղ Պէտլեյայի և Շիպկայի մօտ, շարունակուած էր իր ուսուցչական գործունէութիւնը երկրաստորգ բժիշկներէ շրջանում պատերազմական բանակէ մը: 1880 թիւին Մոսկուայի համալսարանի խորհուրդը յօրհանարին միաձայն ընտրեց ֆակուլտետական վերաբուժական կլինիկայի ամբիոնի համար, որը գրաւած ունէր նա մինչև 1893 թիւը, երբ հրաւեր ստացաւ գրաւել Մեծ Իշխանուհի Նիքիտ Պալիտայի կլինիկական ինստիտուտի գրեթէ ամբողջը: Յօրհանար շատ անգամ է արտասահման ուղարկվել գիտնական նպատակով: Նա շատ ընկերութիւններէ պատաւոք անդամ է: Նրա գիտնական աշխատութիւնները ցրված են զանազան պարբերական հրատարակութիւններէ մէջ, իսկ 1891 թիւից նա, պրոֆէսոր Գեակովսկիի հետ միասին, հրատարակում է «Хирургическая Летопись» անունով մասնագիտական ամսագիրը:

ԱՌԱՂՑԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Այսօր, յուլիսի 1-ին, նշանակված էր Բարեգործական ընկերութեան տեղական ճիւղի ընդհանուր ժողով, բայց անդամներն օրինական թիւ չը հաւաքվելու պատճառով, յետաձգվեց: Ժողովի նպատակն էր՝ 1) խորհրդից յետ ստացած ճիւղին 2114 ր. յատուկ գումարի մասին անօրէնութիւն, և 2) մտածել ու որոշում կայացնել մեր գաղաքային-ընկերացարանի ապագայ վիճակի մասին»:

ԱՆՔԱՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Ներառելով սաստիկ չոր է: Քիսմի օր է անձրև չէ գալիս: Ցանքները խոտանում են առատ հունձ, բայց մի երկու անձրևի պէտք ունենա: Մեզ մօտ շատ քիչ են ջրովի արտեր, մեծամասնութիւնը անձրևի է կարօտում: Արդէն խոտը հնձված է Խոտը այս տարի սակաւ էր, որովհետև ապրիլի և մայիս ամիսներում շատ ցրտեր եղան: Քարին շատ առատ է: Ետ լաւ բերք ունի նաև կտաւատը: Սիւրբը, որ չորս օր առաջ ծախվում էր 1 ր.—1 ր. 10 կ., այսօր բարձրացաւ 1 ր. 40 կոպէկի: Զարմանալի են մեր հացալածառները, հէնց որ մի երկու օր անձրև չէ գալիս, իսկոյն ուղում են կրկնակի գնով ծախել հացը: Եթէ այսպէս շարունակվի, շատ դժուար կը լինի չը-բաւոր դասի վիճակը»:

ԳՐՈՋՆԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ մեզ գրում են. «Յուլիսի 27-ին, երեկոյան ժամը 4-ին, տեղի Յակոբ բանայի Ժամակուհիների կանոնում են մի հիւանդի մօտ հաղորդութիւն տալու: Քահանայ, վերջինից մասնատուվել, խաչ ու աւետարան, գնում է դէպի հիւանդի տունը: Բայց դեռ չը հասած հիւանդին՝ եկեղեցու և հասարակաց այգու մէջ տեղ դնելով հրապարակի վրա, ուր կար խուռն բազմութիւն, մօտենում է մի պարզին և առանց մի որ և է խօսք ասելու՝ խփում քահանային դանակով: Քահանայն ընկնում է գետին և մի վայրկեանից յետոյ անհնչանում: Կամենում են բռնել մարդասպանին, բայց նա բոլոր ոյժով պիտակում և դանակով պաշտպանում է իր անձը մօտաւորապէս 15 վայրկեան, վերջապէս մի 23 տարեկան հրէայ, յետեւից վաղելով՝ խփում է նրան հաստ փայտով: Մարդասպանը ստանալով զինքն փայտի ուժեղ հարուած, իսկոյն վայր է ընկնում: Մարդիկ ամեն կողմից թափվում և սկսում են ձեռն շարժել, այնպէս որ գուցէ սպանելին, եթէ ոստիկանութիւնը չուտ չը հասնէր: Տարվում է ոստիկանատուն: Կամենում են պատճառը իմանալ, բայց մի որոշ պատասխան չեն տալու: Նա ասում է, թէ՛ «քահանայն մի քանի օր քրքրել առաջ ինձ ձեռքից, ես էլ նրան սպանեցի»:

Մեղաւորը յանձնվում է ընդիւլին: Տէր-Յակովլեմ ունէր 80 տարեկան մայր և մօրեղբայր, նրա մօտ ապրում էին իր այրի միացած ըրդը և եղբոր կինը իրանց զաւակներով, այնպէս որ, մեռնելուց յետոյ, թողնում է 14 որբեր առանց աշխատող ձեռքի և, ասում են, պարտք: Այսօր կատարվեց թաղումը: Սկզբնում կար խուռն բազմութիւն, կային շատ օտարազգիներ: Ներկայ էր չրճանի հրամանատարը, չքաղցածութիւն և սգանշուով, և պրիստաւը: Տեսարանը սարսափելի տուր էր: Փոքրիկ որբերի ճիւղն ու աղաղակը՝ դղրդեցնում էր եկեղեցին: Հրամանատարը այնքան բարի էր, որ թող տուեց իր պրիստաւին ստորադրութիւնով ժողովի նուիրատուութիւններ որբերի համար: Երբեք էլ բարեհաճեց նուիրել մի որոշ գումար և, բացի դրանից, կարգադրեց այգում հասարակական զբօսանք կազմել, և եկամուտի կէս մասը յատկացնել որբերին: Նուիրատուութիւնը դեռ շարունակվում է այստեղի պրիստաւի ձեռքով: Նուիրատուներն են հայեր, ռուսներ, վրացիներ, թուրքեր և օտարերկրացիներ»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՐԻՔԻՍՏԻՑ

Վան, 22 յունիսի

Անցեալները տեղացած քիչկ մը անձրևներուն շնորհիւ հացի գինը քիչ մ'աւ իջաւ, 44-էն 48 դրուչի: Արճէչի և Այլավայրի կողմերէն բաւական քանակութեամբ ցորեն եկաւ: Սակայն քիչ մը տարօրինակ է տեսնել քիւրդեր, որոնք նաւերով ցորեն կը բերեն ծախելու, որովհետև առաջներ հայերն էին այդ դերը կատարողները, իբրև երկրագործ տարրը երկրին մէջ. սակայն այժմ հայերը կարտարեն ու բերքերը օրինաւոր կ'երկարացնէին յաւաքով յափշտակելով կը ծախեն ի նպաստ իրենց զբաղման:

Ինչպէս գրած եմ, ցանքերը այս տարի շատ լաւ են, սակայն այս օրերս անձրևի մը կը կատարին լաւագոյն ըլլալու համար, դժբախտաբար, երկինքը այդ յոյսը չի տար մեզի:

Տեղւոյս ռուսաց հիւպատոս պ. Մայէվսկի, որ քաղաքական և դիտական պոպոյի ելած էր Գիւրբեքլի կողմերէ՝ ամսիս 13-ին հօս վերադարձաւ և երէկ դարձեալ իր կողմերէն ուղևորուեցաւ պոպոյի համար:

Ներքին սրբազանը կը գործէ արիւն քրտինքի մէջ: Ամեն օր բան մը կը լինէր իր գործերուն վրայօք, սակայն մէկ քանին յիշատակելով բաւականանար առ այժմ:

Սրբազանը Վահրճ վարդապետի նախագահութեամբ տակ եօթ անձերէ ուսումնական խորհուրդ մը կազմեց՝ գրեթէ աղաներու տղաներէ բաղկացած, որոնք ամեն բանէ առաջ առուստուրէ և վախճառութենէ կը հասկնան, քան կրթական գործէ: Մասնաւոր իր Վանը պէտք չունի ուսումնական խորհրդի մը, որովհետև ամեն դպրոցն ունի իր կրթական ծրագիրն ու հսկող հոգաբարձութիւնը: Ինչ հարկ ուսուցիչի ձեւերու, փալիւրն անուններու, հստակական հովերու... Աւելի լաւ չըլլար չափաւոր ու պարզ գործերու ձեռնարկել, որ կրնայ շարունակական ըլլալ: Գիտեմ, սրբազանը բարի նպատակով մը զանոնք ազգային գործօք մէջ կը քաշէ, սակայն մեր հարուստները կրթական գործին դրամ տալու վարժուած չեն դեռ...:

Սրբազանը բացի այն տասը լիւրա ամսակաւնէն, որ կը ստանայ ուղղակի պատրիարքարանի անդուկէն, այժմ ամսական 15—20 լիւրա ալ կուզէ առաջնորդարանին անդուկէն՝ առաջնորդարանի մէջ քիչ մը շքեղ կարգ ու սարք հաստատելու, իր զբաղմունքները, ծառաներու և այլն պէտքերու համար: Սակայն, սրբազան, մեզք չէ մեր այդքան դրամին, որ զուր տեղը ծախսելու կըլլէ: չըլլալ թէ աղիւս պատրուակ մըն է ձեռ չուտ փախնելու: 25 օր մենք դեռ դրամ կը մուրաքնդ դուրսեցնէին...

Բողոքականները իրենց նպատակները բոլորովին դադրեցուցած են այժմ՝ առաջնորդարանի հետ բաժնեւոր ըլլալուն համար: Իսկ կաթոլիկները վերջին մէկ շաբթուան մէջ քանի մը հարկու չափ ցորեն յատկացին զիւղացիներուն՝ իբրև նպաստ՝ մինչև բաւարիկ կարգին, որ ամեն ցանքերու տուած արդիւնքով ժողովուրդը պիտի կարողանայ ապրել:

Խորէն—Ա.

ՆԱՄԱԿ ՊԱՐՏԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

Ուրմի, յունիսի 17-ին

Առաջնորդական գործակալ վանքի Աւետիս բանայի Շաղոյան, որ Ատրպատականի թեմական առաջնորդի կողմէ ուղարկված էր այստեղ դաւանափոխութեան առաջին աստիճան, ինքն արդէն դաւանափոխ եղաւ՝ ընդունելով կաթոլիկութիւնը: Այդ առիթով վաղուց լուրեր էին պտուտ թաղաքում, բայց ոչ որ չէր ուղում հաւատալ, մինչև որ երէկ առաւօտեան, 10 ժամին, Ուրմի կաթոլիկ միսիոնարութիւնը պաշտօնապէս յայտնեց հայոց հոգևոր իշխանութեան, որ Շաղոյան քահանայն ընդունված է կաթոլիկներ շարքում: Յայտնվեց նոյնպէս, որ Շաղոյան քահանայն սրանից դեռ 5 ամիս առաջ է խնդրած արտոյց եղել՝ դաւանափոխ լինել և այդ բանի մասին Ուրմի կաթոլիկ միսիոնարութեան պետը՝ գերապաշտաւ Լինէ՛ գրած է եղել Հռոմ՝ պապին և Կ. Պօլսի՝ Ագաթանին, իսկ զբաղման պատասխանը միայն վերջին օրերս է ստացվել:

Այսօր Ուրմի կաթոլիկների միսիոնարութիւնը կաթոլիկ եկեղեցում կատարեց մի փառաւոր հանդէս—թափօր Վարդապետի տոնի պատճառով. պատարագը և բարոյը տեղի ունեցաւ: Գործերէն լեզուով: Անգղիկ եկեղեցին, նաև վերնաշարքերը լինէն էին ծայրէ ի ծայր: Ինչպէս միշտ, այնպէս էլ այսօր, եկեղեցին զարդարված էր փառաւոր կերպով՝ բազմաթիւ և բազմատես-

նակ պատկերներով, արհեստական ծաղիկներով փնջերով և մոմերով. զարդարված էր նաև եկեղեցու բազը կրօնական դրօշակներով և նկարներով:

Շատերը չը հաւատարով Շաղոյանի կաթոլիկութիւնը ընդունելը՝ անձամբ եկել էին եկեղեցին ակամատես լինելու, և տեսան թէ ինչպէս երկկայ «սալիֆա Շաղոյան», այսօր դարձած «կապա Աւետիս», զգեստաւորված, սպասաւորում էր կրօնական արարողութեան կաթոլիկ հոգևորականների հետ միասին: Պատարագին և թափօրին աչքի էին ընկնում իրանց ներկայութեամբ առաջնորդական փոխանորդ Խաչիկ վարդապետ Դադեան, հայր Մովսէս՝ Սալմաստից, ռուսաց փոխ-հիւպատոս Խարալէ Բուդաղեան, Մշակի՝ թղթակիցները, զանազան բարձրաստիճան անձինք, նոյն իսկ երկուսու մասնակցականների աչքի ընկնող մի խումբ՝ մօտ 30 հոգի:

Ներկայ լինելով այսօրվայ պատարագին, մենք անանք, որ մեր և օտար հոգևորականների մէջ կայ անաղիւս վիճ: Եկեղեցում անաղիւս բազմութիւնը, փառաւոր զարդարները, հոգևորականների կանօնաւորութիւնը, քաղցր նուագածութիւնը և ներդաշնակ ու հիանալի երգեցողութիւնը թողնում են մարդու վրա մի անհնչելի տպաւորութիւն: Այդ բոլորով Ուրմի կաթոլիկ ժողովուրդը պարտական է Հռոմի և ֆրանսիական միլիոններին, որոնցից զուրկ է էլմիսինը և որի համար մենք չենք մեղադրում դարբնով ընած այդ էլմիսինին: այլ մեղադրում ենք նրա համար, որ նա շարունակում է ուղարկել առանց ռուսիկ քաղցած պաշտօնեաներ, որոնք չը գիտենալով որոտեղից ապրուստ ձարել, սկսում են ալ ու ձախ կողոպտել առանց այն էլ թշուառ ժողովուրդին և փողով ծախել իրանց հաւատը, որով վատ օրինակ են դառնում ժողովրդին և հասարակութեան՝ գեղով նրա պատիւը, վարկը:

Ա.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական լրագիրները հաղորդում են, որ խաղաղութեան կոնֆերենցիան կը ցրվի յուլիսի վերջին և նորից կը դուստնի կեղծ տարի:

«Matin» լրագիրը զայրոյթով մատնացրեց է անում ֆրանսիական զինուորական ծախսերի վրա և նկատում է, որ երբ և իցէ պէտք է խոտորելու, որ Ռուսաց Վայսրի առաջարկած զաղափարը ուսուցիւն չէ: 1900 թիւին զինուորական բուլժետը 40 միլիոնով աւելի կը լինի ներկայ տարեւոյ, իր զբաղմունքները, ծառաներու և այլն պէտքերու համար: Սակայն, սրբազան, մեզք չէ մեր այդքան դրամին, որ զուր տեղը ծախսելու կըլլէ: չըլլալ թէ աղիւս պատրուակ մըն է ձեռ չուտ փախնելու: 25 օր մենք դեռ դրամ կը մուրաքնդ դուրսեցնէին...

«Italie» լրագիրը հաղորդում է, Կ. Պօլսից ստացած տեղեկութիւններէ հիման վրա, որ Բ. Կուռը երկար տատանումներէց յետոյ հաստատեց Կրեմլում նշանակված օտարազգի հիւպատոսներին: Այդ վճիռն ընդունելուց այն պատճառով, որ Բ. Կուռը վախենում էր՝ չը լինի թէ հիւպատոսներին չը հաստատելու փաստը համարվի հրաժարում Կրեմլի վրա իր ունեցած բարձրագոյն իրաւունքներից: Իր բարձրագոյն իրաւունքները ամբացնելու համար թիւրքաց կառավարութիւնը հաստատեց հիւպատոսներին ոչ թէ արքայադի Գէօրգիի անձի մօտ, այլ Կրեմլի կառավարութեան մօտ:

—Մինչև յունիսի 28-ը (յուլիսի 10-ը) Սերբիայում կատարվել են՝ երեք նախկին միսիոնարներ, երեք պետական քաղաքացիներ, երկու դատաւորներ, չինգ պրոֆէսորներ, զիմ-նաղիլայի չորս զինվորներ, չորս ուսուցիչներ, տասը պատգամաւորներ, չորս փաստաբաններ, երկու քահանայ, չորս ուսանողներ, երկու զինգապետ և երկու կապիտան:

—Վերջերս բողոքական լրագիրներում խիստ յարձակողական յօդուածներ են տպվում իշխանի դէմ: Կարալէյովի օրդանը ուղղակի անդադրում է իշխանից, որ նա երկաթուղիական դաշնագիրներ տարագրելուց անմիջապէս յետոյ կէս միլիոն ֆրանկ ստացան: Դանիօվի «Բոլցեար» լրագիրը գրում է. «Իշխան Ֆէրդինանդը միտ է էվկլիսիոգրաւում և փողերի և սպասուած արտասահմանից, որպէս զի անհոգ և ուրան ճանապարհորդութիւն սկսի»:

Վրա ամենից խիստ յարձակվում է «Տրիբունա» լրագիրը: Կրագիրը մեղադրում է իշխանին, որ սա խախտեց սահմանադրական երդումը: «Բոլ-գարային» հարկաւոր չէ այնպիսի թաղաւոր, որ մտածում է միայն իր զուարճութիւնների մասին և դրա համար երկու միլիոն փող է ստանում ժողովուրդից—ասում է լրագիրը: Կրագիրը այդ համարը յարժուին գրաւեց:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիական կառավարութիւնը հրատարակեց փաստեր Ֆրանսիայի ներմուծութեան և արտահանութեան մասին 1899 թիւ առաջին չինգ ամիսների ընթացքում: Այդ թվանշաններից երևում է, որ ներմուծումը պակասել է 82 միլիոնով անցեալ տարվանից, իսկ արտահանութիւնը մեծացել է 143 միլիոնով: «Journal des Debats», լրագիրը ուղարկելին է դարձնում այն չնչին տեղի վրա, որ Ֆրանսիայի արտահանական առևտրի մէջ ըստմամբ Ռուսաստանը: Եւ, յիշաւ, եթէ կրը թվերով հաշուենք, ֆրանսիական ապրանքներ Անգլիա ուղարկվել են 467 միլիոնի, Բելգիա՝ 223, Գերմանիա՝ 167, Շվեյցարիա՝ 84, Իտալիա՝ 70, Սպանիա՝ 50, մինչև անգամ Թիւրքիա՝ 17 և Արգենտինեան հանրապետութիւնը՝ 17 միլիոնի, իսկ Ռուսաստան մտել են ֆրանսիական ապրանքներ միայն 10 միլիոնի:

«Нов. Обозрение» լրագիրը Բագուի թղթակիցը հաղորդում է, որ յուլիսի 2-ին Բագուի նահանգական դատարանի քաղաքացիական բաժնում ընկնում էր մի բաւական հետաքրքիր գործ:

Անդրկովկասեան երկաթուղու կոնդուկտոր Վոյտոյէվ ներկայ տարվայ փետրվարի 4-ին Աջիկաւոյ կայարանում դատաւ մի քանի, որի մէջ կային զանազան ղօկումէնտներ և աւետարական խաղաղութեան հինգ տոմսակներ, «Իւրաքանչիւրը 10 հաղար կրոն արժողութեամբ», ինչպէս ասված էր կոնդուկտորի խնդրի մէջ: Ներկայացնելով այդ տոմսակները ժողովարանային վարչութեանը, Վոյտոյէվ պահանջում է այժմ նրանց տէրից, բաղդուրի կաճառական Նաւթաթովից, այդ տոմսակները արժողութեան օրինական երրորդ մասը, ընդամենը 6,500 ռուբլի: Կոնդուկտորը շահեցր պաշտպանող երդուեալ հաւատարմատար Պուցիլո դատարանում պահանջում էր այդ երրորդ մասը: Նաւթաթովի փաստաբան Սվյազով, ներկայացնելով դատարանին կոնդուկտորի գտած տոմսակները, բացատրեց, որ այդ ամբողջ պահանջը թիւրքականացութեան հետևանք է, որովհետև կոնդուկտորը և այն անձինք, որոնք ներկայ են եղել քանի դանեւրու ժամանակ, գերմաններն չը գիտեն: Այն ինչ, իրապէս, տոմսակներից իւրաքանչիւրը արժէ 50 կրեյցեր (37 կօպ), ինչպէս և տոմսակների վրա նշանակված է մանր թվանշաններով, իսկ 10 հաղար կրոն թվանշանը գլխաւոր տարած գումարի թիւն է, որ կարելի կը լինէր ստանալ այդ տոմսակներով: Այդ տոմսակները հրատարակվեցին Վիլնյայի նորերս տեղի ունեցած ցուցահանդիսի առիթով: Այդպիսով, բոլոր տոմսակներն արժեն 1 ռուբլի 80 կօպէկ: Կոնդուկտորը կարող էր պահանջել 60 կօպէկ, որի համար նոյնպէս իրաւունք չունի, որովհետև քանի մէջ գտնվող ղօկումէնտներից երևում է թէ ունի են պատկանում այդ տոմսակները, իսկ գտնելը օրէնքով համարվում է այն հասկացողութիւնը, երբ գտած իրերի տէրը յայտնի չէ:

Գործը յետաձգվեց կոնդուկտորի փաստաբանի խնդրի պատճառով, որպէս զի նա կարողանայ ծանօթանալ հակառակ կողմի ներկայացրած ղօկումէնտների հետ:

ՄՇԱԿԻ՝ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՈՒՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

5 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ: Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդօրովնա, Մեծ Իշխան Միխայիլ Ալեքսանդրովիչ, Մեծ Իշխանուհի Կեյսիա Ալեքսանդրովնա, Մեծ Իշխանուհի Օլգա Ալեքսանդրովնա, Մեծ Իշխանուհի Ալեքսէյ Ալեքսանդրովիչ և Ալեքսանդր Միխայիլովիչ յուլիսի 4-ին ճանապարհ ընկան Պետերբուրգից դէպի Բաթում, ու Տէր հանգուցեալ Թագածառուհի Յետաբովիչ Գէօրգի Ալեքսանդրովիչի ժամինին դիմարդելու համար:

ՊԱՐԻՉ: «Chateau d'eau» թատրոնում Դէրուլէյ խօսեց պէրնոյցային հանրապետութեան անհրաժեշտութեան մասին, և սաստիկ յարձակումներ ենթարկեց պարլամենտի այժմեան բէժմը, կառավարութիւնը և նրա արտաքին քաղաքականութիւնը. նոյնպէս դատաւարութեան էր զենեքալ Ջիլէտտին կատարեալ ներումն շնորհել: Բազմութիւնը մի քանի անգամ ծափահարեց հետաքրքիր: Ոչ մի միջնադէպ տեղի չունեցաւ:

ԱՐԲԱՆԳԻՆԻՍ: Երէկ, երեկոյան 8 ժամին, Մեծ Իշխան Վլադիմիր Ալեքսանդրովիչ վերադարձաւ Պրնեպա և Երնիուրոկ ճանապարհորդութիւնից և գնաց «Архангельск-пристань» երկաթուղու կայարանը, որտեղ Նորիք Բարձրութեանը հանդիսաւոր ընդունեցին: Ամբողջ նաւամա-

Типографія Грузинск. Т.—ва Орбеліановская ул., № 27.